



Ապահովագրական գործակալների (ֆիզիկական անձ) լիազորություններ

Ապահովագրության դասերը՝

- դժբախտ պատահարներից ապահովագրություն
- փոխադրվող գույքի ապահովագրություն
- ցամաքային տրանսպորտի ապահովագրություն
- հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն
- գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն
- ցամաքային տրանսպորտային միջոցների (նաև բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն
- ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն
- առողջության ապահովագրություն
- աջակցության ապահովագրություն
- ֆինանսական վնասների ապահովագրություն

Լիազորությունները՝

- Ընկերության անունից Ընկերության ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի (այսուհետ՝ Ապահովագրության պայմանագիր), ինչպես նաև կնքված Ապահովագրության պայմանագրերի ապահովագրական գումարների չափին, ժամկետներին, ապահովագրության օբյեկտներին վերաբերող պայմանները փոփոխելու վերաբերյալ լրացուցիչ համաձայնագրերի կնքման նախապատրաստական աշխատանքների իրականացում,
- Ընկերության անունից Ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրավճարների ստացում,
- Ընկերության անունից հնարավոր ապահովադիրներին ապահովագրության առաջարկների ներկայացում,
- Հաճախորդների հետ Ընկերության անունից Ապահովագրության պայմանագրի կնքման ուղղությամբ բանակցությունների վարում,
- Ընկերության անունից հնարավոր ապահովադիրներին Ընկերության գործունեությանը վերաբերող նյութերի տրամադրում, պարզաբանում, նկարագրություն:

Գործակալն իրավասու է առանց Ընկերության նախնական համաձայնության՝

1. կնքել մինչև 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ ապահովագրավճար կամ մինչև 30,000,000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ ապահովագրական գումար նախատեսող Ապահովագրության պայմանագրեր/վկայագրեր: Նշված գումարից ավել ապահովագրավճար կամ ապահովագրական գումար նախատեսող ապահովագրության պայմանագիր կնքելու դեպքում անհրաժեշտ է ընկերության նախնական համաձայնությունը,
2. ամսական հավաքագրել մինչև 10 000 000 (տաս միլիոն) ՀՀ դրամ ապահովագրավճար: